

ՃԳՆԱԺԱՄԻ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԿՐՃԱՏՄԱՆ
ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎՐԱ



Երախտիքի խոսք

Սույն Աղքատության գնահատման հաշվետվությունը կազմվել է 2015թ. Հարավկովկասյան տարածաշրջանի Ծրագրային Աղքատության գնահատման գծով տեխնիկական օժանդակության շրջանակում (P151474): Հայաստանի աղքատության գնահատման խմբի կազմում ընդգրկված են Նիսթա Սինհան (աշխատանքային խմբի ղեկավար), Մորից Մեյերը և Սասուն Ցիրունյանը: Հաշվետվությունում հաշվի են առնվել Գոհար Գյուլումյանի, Ալեքսան Հովհաննիսյանի, Տիգրան Կոստանյանի և Դոնատե Դե Ռոսայի հետ քննարկումների արդյունքները: Սաթիկ Նաիրյանը ապահովել է կազմակերպչական և տեխնիկական աջակցությունը: Արմանդա Կարչանին կազմավորել է հաշվետվությունը:

Հաշվետվությունը պատրաստվել է Հենրի Կերալիի, Լորա Բեյլիի, Կարոլինա Սանչես-Պառամոյի և Ռաշմի Շանկարի ղեկավարությամբ: Խմբագրական գնահատումն իրականացվել է Նանդինի Քրիշնանի և Պեդրո Ռոդրիգեսի կողմից:

Խումբը երախտագիտություն է հայտնում Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը (ՀՀ ԱՎԾ) և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը բոլոր մեկնաբանությունների և առաջարկությունների համար:

Բովանդակություն

ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔ	2
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	4
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
2. ՎԵՐՋԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ	10
Տնային տնտեսությունների սպառման աճը	10
Անհավասարություն	12
Աղքատության կրճատումը միջազգային պրակտիկայում	13
Աղքատության կրճատումը ազգային տեսանկյունից	15
3. ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԿՐՃԱՏՄԱՆ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄ ԿԱԶՄԵԼԸ	22
Ներքին աշխատաշուկա	26
Արատզնա աշխատողներից ստացվող դրամական փոխանցումները	31
Կենսաթոշակները և սոցիալական տրանսֆերտները	32
4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	32

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ԵԿԱ	Եվրոպա և Կենտրոնական Ասիա
ECAPOV	Ներառյալ եղված սպառման տվյալների բազա, Համաշխարհային բանկ
ECATSD	Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների վիճակագրության մշակման խումբ
ԸՆԾ	Ընտանեկան նպաստի ծրագիր
ՕՈԻՆ	Օտարերկրյա ուղղակի ներդրումներ
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
SSԿԱՀ	Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն
ԲԱԻ	Բազմաչափ աղքատության ինդեքս
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն
ՊԾԴ	Պետական ծախսերի դիտարկում
ՌԿԲ	Ռուսաստանի կենտրոնական բանկ
ՀՄՊԱ	Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը
ՀԶՑ	Համաշխարհային զարգացման ցուցանիշներ


1. Ներածություն

1.1. Սույն հաշվետվությունում ներկայացվում է Հայաստանի փորձը՝ 2009թ.-ից ի վեր աղքատության կրճատման և առավել անապահով բնակչության կենսամակարդակի բարելավման հարցում: Տնային տնտեսությունների կենսամակարդակը որոշվում է ելնելով վերջիններիս սպառողական ծախսերի չափերից: Ճգնաժամից հետո տնտեսության վերականգնման արդյունքում առավել անապահով բնակչության շրջանում արձանագրվեց սպառողական ծախսերի որոշակի աճ, որը սակայն չէր հասնում մինչ 2009թ. արձանագրված մակարդակին: Բացի այդ, հարաբերական առումով աճը դարձել էր պակաս աղքատամետ, քանի որ ապահով բնակչության համեմատ անապահով տնային տնտեսությունների սպառման աճի մակարդակը ավելի ցածր էր: Արդյունքում, թեև սպառման աճն իրոք հանգեցրեց աղքատության նվազմանը, անհավասարությունը ներկայումս գերազանցում է մինչ 2009թ. արձանագրված մակարդակը: 2013թ.-ին աղքատության գծից ցածր էր գտնվում Հայաստանի բնակչության 32 տոկոսը, այսինքն աղքատության տոկոսը գերազանցում էր նախաճգնաժամային տարիների ցուցանիշը, սակայն այդ ցուցանիշը 2010թ. 35.8 տոկոսից ցածր էր: Իրականում 2012 and 2013թթ. ընթացքում աղքատության կրճատումը կարծես կանգ է առել: Սույն հաշվետվությունում դիտարկվում են Հայաստանի աղքատության կրճատման միկրո և մակրո հանգամանքները, որպեսզի (ա) ներկայացվեն հետճգնաժամային շրջանի աղքատության, անհավասարության և սպառման աճի հիմնական առանձնահատկությունները, (բ) ուսումնասիրվում են այդ ժամանակահատվածում աղքատության կրճատման հիմնական գործոնները, և (գ) ուսումնասիրվում է, թե ինչու ապագա աճն այնքան աղքատամետ կարող է չլինել, որքան նախկինում էր:

1.2. **2009թ. անկումից հետո տնտեսության աճը Հայաստանում աստիճանաբար վերսկսվեց, սակայն այն դեռևս չի հասել նախաճգնաժամային մակարդակին (Նկար 1):** Մինչ 2009թ. Հայաստանի իրական ՀՆԱ-ն աճում էր տարեկան 11.8 տոկոսով: Տնտեսական ճգնաժամի հետևանքով աճը դադարեց, ընդ որում 2009թ.-ին ՀՆԱ-ն կրճատվեց 14.1 տոկոսով: Բյուջետային խթանման արդյունքում տնտեսությունում վերելք նկատվեց և 2012թ.-ին իրական ՀՆԱ-ն աճեց 7.2 տոկոսով, որից հետո աճը դանդաղեց, կազմելով 3.5 տոկոս 2013թ.-ին և 3.4 տոկոս 2014թ.-ին: Այդ միտումը համընկնում էր մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճի միտման հետ, որը 2010-13թթ.-ներին միջինում կազմում էր 4.3 տոկոս: Այդ ժամանակահատվածի տնտեսական աճին բնորոշ էր շինարարության ոլորտի արտադրության ծավալների կրճատում և ծառայությունների ու գյուղատնտեսության ոլորտների արագ աճ: Ծառայությունների ոլորտում աճը հիմնականում պայմանավորված էր առևտրի, տեղեկատվության և հաղորդակցության, ֆինանսների, ապահովագրության, սննդամթերքի և ժամանցի գծով ծառայությունների աճով: Գյուղատնտեսության ոլորտում 2013թ.-ին աճը կազմեց 8 տոկոս, և թեև այդ տարի անբարենպաստա եղանակային պայմանները ծանր հարված հասցրեցին ոլորտին, աճին նպաստեց պետական օժանդակության ծրագիրը, մասնավորապես գյուղացիներին անվճար սերմերի և վառելիքի ու պարարտանյութերի համար սուբսիդիաների հատկացումը (ԱԶԲ 2014թ.): Արդյունաբերության բնագավառի ոչ մեծ մասնաբաժինը տնտեսական աճի ներքո (բացառությամբ շինարարության) հանքարդյունաբերության, ընդերքօգտագործման, ինչպես նաև դեղորայքի, սննդամթերքի և խմիչքների արտադրության շնորհիվ էր: Ակնկալվում է, որ կառավարության արտահանմանը ուղղված տնտեսական զարգացման նոր ռազմավարությունը թույլ կտա ՀՆԱ-ում բարձրացնել

արդյունաբերության կշիռը: 2014թ. տնտեսական աճի կրճատումը հիմնականում պայմանավորված էր շինարարության, հանքարդյունաբերության և էներգետիկայի ոլորտներում արձանագրված նահանջով, սակայն նաև Ռուսաստանի տնտեսության անկմամբ, ոչ առևտրային բնույթի դրամական փոխացումների և օտարերկյա ուղղակի ներդրումների (ՕՈԻՆ) ներհոսքի և արտահանումից ստացվող եկամուտների կրճատմամբ: Ակնկալվում է, որ մոտակա տարիներին վերոնշյալ գործոնները նույնպես կզսպեն տնտեսական աճը:

Նկար 1. Իրական ՀՆԱ-ի աճի տեմպերը, 2000–15թթ., տոկոս



Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, Համաշխարհային զարգացման ցուցանիշներ (տվյալները 2015թ. մայիսի 25-ի դրությամբ):

Ծանոթ. Աճի տեմպերը հիմնված են իրական ՀՆԱ-ի տարեկան փոփոխությունների վրա (մշտական շուկայական գներով):

1.3. Վերջին 10 տարիներին ՀՆԱ-ի կառուցվածքի առանցքը արդյունաբերությունից տեղաշարժվեց դեպի ծառայությունները (Նկար 2): Խորհրդային ժամանակաշրջանում Հայաստանի տնտեսությունում շատ մեծ էր արդյունաբերության դերը, ընդ որում արդյունաբերությունը գերիշխող տեղ էր զբաղեցնում նաև վերջին տարիներին: 2000թ.-ին գյուղատնտեսական ավելացված արժեքի կշիռը ՀՆԱ-ում կազմում էր ընդամենը 26 տոկոս, 2005թ.-ին այն կրճատվեց մինչև 20 տոկոսի, 2013թ.-ին գյուղատնտեսության ավելացված արժեքի կշիռը 22 տոկոս էր: Միաժամանակ վերջին տասնամյակում զգալիորեն աճեց արդյունաբերության տեսակարար կշիռը (հանքարդյունաբերություն, արտադրություն, շինարարություն, էլեկտրաէներգիա, ջրի և գազի մատակարարում), որը 2000թ.-նի 39 տոկոսի համեմատ 2006թ.-ին կազմեց 46 տոկոս: 2013թ.-ին ծառայությունների կշիռը ՀՆԱ-ում կազմում էր 47 տոկոս, արդյունաբերությանը 31 տոկոս, իսկ գյուղատնտեսությանը 22 տոկոս: Նման կառուցվածքային տեղաշարժերը տեսանելի են աճի աղբյուրների փոփոխություններում և կախված նրանից, թե ինչպիսին է դրանց ազդեցությունը զբաղվածության վրա, տեղաշարժերը կարող են նպաստել աղքատության կրճատմանը և ընդհանուր բարեկեցությանը:

Նկար 2. ՀՆԱ-ի կշիռն ըստ տնտեսության ոլորտների, 2000-13թթ., տոկոս




Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, Համաշխարհային զարգացման ցուցանիշներ (տվյալները 2015թ. մայիսի 25-ի դրությամբ):

1.4. **Ճգնաժամից հետո աճեց ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումների կշիռը ՀՆԱ-ում (Նկար 3):** ՀՆԱ-ի կշռի տեսքով նման դրամական ներհոսքի ցուցանիշը Հայաստանում աշխարհում ամենաբարձրերից է: 2013թ.-ին ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումները կազմում էին ՀՆԱ-ի 21 տոկոսը, գերազանցելով նախաճգնաժամային 16 տոկոս ցածր ցուցանիշը: Ռուսաստանի ՀՆԱ-ի անկումը էապես ազդեց Հայաստանի ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումների ներհոսքի վրա, քանզի դրանց զգալի մասը գալիս էր Ռուսաստանում աշխատող հայերից (ԱՄՀ 2012թ.): Ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումները, խթանելով մասնավոր սպառումը և բարձրացնելով ընդհանուր պահանջարկը, կարևոր դեր են խաղում Հայաստանի տնտեսության համար: Որոշ տնտեսագետներ գտնում են, որ խոշոր ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումները կարող են նաև բացասաբար անդրադառնալ աշխատաշուկայի վրա՝ ինչպես պահանջարկի՝ արտահանմանն ուղղված ոլորտների փոխարեն, խթանելով ոչ արտահանելի ոլորտների աճը, այնպես էլ առաջարկի առումով, բացասաբար անդրադառնալով աշխատելու ցանկության վրա: Ռուսաստանի կենտրոնական բանկի տվյալների համաձայն Ռուսաստանի տնտեսական անկման և ԱՄՆ դոլարի նկատմամբ ռուսական ռուբլու արժեզրկման հետևանքով 2014թ. վերջին եռամսյակում ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումները Հայաստանում (ԱՄՆ դոլարով) նվազեցին 31 տոկոսով (Համաշխարհային բանկ 2015թ.):

2009թ. խորը անկումից հետո տնտեսական աճի վերսկսումը պայմանավորված էր բյուջետային խթանմամբ, ընդ որում տնտեսության վերականգնումից հետո հարկաբյուջետային քաղաքականությունը խթանումից անցավ կոնսոլիդացման, միաժամանակ պահպանելով և ընդլայնելով աղքատամետ ծախսերը: Արձագանքելով ճգնաժամին Հայաստանի սոցիալական ծախսերը, մասնավորապես կենսաթոշակներն ու նպատակային սոցիալական աջակցության նպատակով հատկացվող սցիալական նպաստները (ընտանեկան նպաստի ծրագիր՝ ԸՆՊ) աճեցին: Կենսաթոշակները բաղկացած

են բաշխողական սկզբունքով հատկացվող ծերության կենսաթոշակից (որը կապված է աշխատանքային ստաժի հետ և թոշակատուների քանակի առումով ամենամեծ կատեգորիան է), հաշմանդամության կենսաթոշակից, արտոնային թոշակից և կերակրողի կորստի դեպքում հատկացվող թոշակից (Աղյուսակ 1): 2008-2013թթ. ընթացքում հիմնական ամսական կենսաթոշակը անվանական առումով կրկնապատկվեց՝ 6,800 ՀՀ դրամից հասնելով 13,000 ՀՀ դրամի, ընդ որում թոշակային եկամտի նամն ավելացումը կարևորվում է աղքատության կրճատման և ընդհանուր բարեկեցության տեսանկյունից: 2011թ. տվյալների հիման վրա Հայաստանի ծախսային և հարկային քաղաքականության ուսումնասիրությունը (կիրառելով Հավասարության սկզբունքով մեթոդաբանությունը՝ Lustig et al. (2013թ.), տե՛ս Համաշխարհային բանկ (2014a), պարզվեց, որ Հայաստանում իրականացված հարկաբյուջետային քայլերը հանգեցրեցին եկամտի զգալի վերաբաշխմանը, որն արտացոլվեց Ջինիի համաթվի կրճատման տեսքով: Սակայն այդ ազդեցությունը հիմնականում պայմանավորված էր բաշխիչ կենսաթոշակներով, որոնք հասցեական չեն, սակայն սոցիալական ծախսերի ներքո ամենամեծ կշիռն ունեն: Վերլուծության շրջանակում նաև գնահատվեց, թե որքանով հարկաբյուջետային ծախսերն ու եկամուտը նպաստեցին աղքատության կրճատմանը: Հիմնական եզրահանգումն այն է, որ թեև նպաստներն ունեն բարձր հասցեականություն, հարկերը, հատկապես դրանց անուղղակի տեսակները, լրջորեն անդրադառնում են աղքատ տնային տնտեսությունների վրա, չեզոքացնելով պետական ծախսերի ազդեցությունը աղքատության մեղմացման հարցում: Իրականում հարկաբյուջետային միջոցառումները Հայաստանում առաջացնում են աղքատ կամ աղքատության շեմին գտնվող բնակչության զգալի տեղաշարժեր բաշխվածության սանդղակում և՛ դեպի վերև և՛ հակառակ ուղղությամբ, ընդ որում այդ տեղաշարժերը շատ ավելի մեծ են քան Լատինական Ամերիկայի այն երկրներում, որտեղ անց են կացվել նմանատիպ վերլուծություններ:

Նկար 3 Ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումների հոսքը որպես ՀՆԱ-ի կշիռ,, 2000-13թթ., տոկոս



Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, Համաշխարհային զարգացման ցուցանիշներ (տվյալները 2015թ. մայիսի 25-ի դրությամբ).

Աղյուսակ 1. Կենսաթոշակները Հայաստանում, 2008–13թթ.

	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.
Թոշակառուների ընդհ. թիվը	469,747	467,555	465,084	454,488	452,505	453,917
Միջին ամսական թոշակ, ՀՀ դրամ	22,556	26,056	28,647	28,701	31,248	30,962
Հիմնական թոշակ, ՀՀ դրամ	6,800	8,000	10,500	1,0500	13,000	13,000
1 աշխատանքային տարվա արժեքը						450
ՍԳԻ, միջին տարեկան	109.0	103.4	108.2	107.7	102.6	105.8

Աղբյուրը՝ Armenia Pension Study (Anusic 2015).

1.6. Սույն Աղքատության գնահատումը ուսումնասիրում է աղքատության կրճատման և ընդհանուր բարեկեցության գծով վերջին միտումները և համալրում է Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրության ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱՎԾ) կողմից իրականացվող աղքատության և սոցիալական ցուցանիշների ամենամյա վերլուծությունը: 2014թ. ՀՀ ԱՎԾ-ի Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը (այսուհետ՝ ՀՄՊԱ) տարեկան հաշվետվությունը (ՀՀ ԱՎԾ 2014թ.) գնահատում է սպառողական աղքատության և այլ սոցիալական և տնտեսական ցուցանիշների միտումները, 2008 թվականը ընդունելով որպես ելակետ: ՀՀ ԱՎԾ-ի հաշվետվությունում մանրամասնորեն վերլուծվում են սպառողական աղքատության ցուցանիշներն ու դրանց միտումները, ինչպես նաև աղքատության պատկերը բնակչության սոցիալապես խոցելի խմբերի, մասնավորապես գյուղացիական տնային տնտեսությունների և երեխաների շրջանում: 2014թ. ՀՄՊԱ-ում նաև հաղորդվում են Հայաստանի ցուցանիշները Համաշխարհային բանկի կողմից մշակված և առաջին անգամ վերլուծված բազմաչափ աղքատության փորձնական ինդեքսի հիման վրա (ՀԲ 2014b): Այս հաշվետվությունում Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտության (այսուհետ՝ ՏՏԿԱՀ) տվյալների հիման վրա իրականացվում է ՀՄՊԱ-ի արդյունքների լրացուցիչ վերլուծություն, ընդլայնվում 2014թ. Աղքատության գնահատման վերլուծությունը, ուսումնասիրելով հետձգնաժամային աղքատության կրճատման բնույթը և աճի՝ նախկինի պես աղքատամետ չլինելու պատճառները (2 և 3 բաժիններ): Վերլուծությունը նաև բացահայտում է 2010-13թթ.-ներին աղքատության կրճատման և աճի աղքատամետ բնույթի ձևավորման հիմքում ընկած երեք գործոնները՝ ներքին աշխատաշուկայի կառուցվածքը, արտերկրում աշխատող անձանցից ստացվող դրամական փոխանցումները և սոցիալական տրանսֆերտները, հատկապես՝ թոշակային եկամուտը: Հաշվետվության եզրափակիչ մասում քննարկվում է այդ երևույթների հնարավոր ազդեցությունը աղքատության հետագա կրճատման վրա (4 բաժին):


2. Վերջին զարգացումները

Տնային տնտեսությունների սպառման աճը


2.1. Ճգնաժամից հետո ընդհանուր աճի վերականգնումը հանգեցրեց տնային տնտեսությունների սպառման ավելացմանը, ընդ որում, ի տարբերություն նախաճգնաժամային շրջանի, ավելի ապահով տնային տնտեսությունների սպառումն անապահովների համեմատ ավելի արագ էր աճում (Նկար 4Ա և Նկար 4Բ): 2004-2007թթ. ընթացքում, երբ աճը միջինում կազմում էր 13 տոկոս, աղքատության մակարդակը կրկնակիորեն կրճատվեց՝ 55 տոկոսից մինչև 26 տոկոս, միջին սպառումն աճեց 6.9 տոկոսով, արձանագրելով սպառման աճ բաշխվածության ամբողջ միջակայքում (Նկար 4Բ): Ստորին 20 տոկոսի սպառման աճը փոքր ինչ ավելի համեստ էր՝ տարեկան մոտ 5.5 տոկոս, սակայն աճն ընդհանուր առմամբ աղքատամետ բնույթ էր կրում: 2010-2013թթ. ընթացքում սպառման գծով ծախսի աճը միջինում կազմեց 4.07 տոկոս, որը մոտ էր մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 4.3 տոկոս միջին աճին: Սակայն աճի մակարդակը եկամտի ընդհանուր բաշխվածության ներքո անհավասար էր: Թեև 2010 և 2013թթ.-ներին սպառման որոշակի աճ արձանագրվել էր յուրաքանչյուր խմբում, սակայն ավելի ապահով տնային տնտեսությունների խմբում այն զգալիորեն գերազանցում էր միջին մակարդակը:

Նկար 4. Սպառման գծով ծախսերի աճը

Ա. Մինչ ճգնաժամը, 2004-07թթ.



Բ. Ճգնաժամից հետո, 2010-13թթ.




Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ պաշտոնական տվյալներ:

Ծանոթ. Բոլոր հաշվարկների հիմքում ազգային սպառման ագրեգատն է (2009թ. մեթոդաբանություն):

2.2. Համաշխարհային բանկը վերջերս մշակել է աճի բաշխվածության ուղղակի արտացոլման ցուցանիշ՝ ընդհանուր բարեկեցության ցուցանիշը սահմանվում է որպես ստորին 40 տոկոսի միջին սպառման աճ: Հաշվի առնելով, որ Հայաստանում աղքատության մակարդակը կազմում է շուրջ 30 տոկոս, ստորին 40 տոկոսը հիմնականում բաղկացած է աղքատներից: Նկար 5-ում ներկայացված են Հայաստանի արդյունքները ըստ ընդհանուր բարեկեցության ցուցանիշի, որն հաշվարկվում է միջազգային համադրումների համար կիրառվող ներդաշնակեցված սպառողական ծախսի հիման վրա: Արդյունքները համապատասխանում են Նկար 4-ի աճի մակարդակի կորին: 2007-2013թթ. ժամանակահատվածում ընդհանուր բնկչության միջին սպառումը տարեկան աճեց 1.7

տոկոսով, սակայն ստորին 40 տոկոսի շրջանում աճը կազմեց ընդամենը 1.14 տոկոս: Մինչ ճգնաժամը ստորին 40 տոկոսի շրջանում արձանագրվում էր միջին տարեկան սպառման 4.29 տոկոս աճ, որը գերազանցում էր 3.50 տոկոս միջին ազգային ցուցանիշը: 2009թ.-ին տնտեսության անկումը մեծ հարված հասցրեց բնակչության ստորին 40 տոկոսին, որի սպառումը տարեկան կրճատվեց 7.46 տոկոսով՝ տնտեսության ընդհանուր ցուցանիշից ավել շատ: 2010-2013թթ. ընթացքում բնակչության ստորին 40 տոկոսի միջին սպառումն աճեց 2.11 տոկոսով, փոքր ինչ գերազանցելով ընդհանուր բնակչության 3 տոկոս սպառման աճը, իսկ 2012-2013թթ.-ներին ստորին 40 տոկոսի միջին սպառման աճը գրեթե զրոյական էր, թեև սպառման միջին աճը կազմել էր 2.15 տոկոս: Ընդհանուր բարեկեցության ցուցանիշից երևում է, որ հետճգնաժամային վերականգնման շրջանում անապահով խավերը աճից այնքան չեն շահում, որքան մյուսները:


Նկար 5. Ընդհանուր բարեկեցության միտումը՝ մեկ շնչի հաշվով միջին սպառողական ծախսի տարեկան աճը, տոկոս



Աղբյուրը՝ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների վիճակագրական տվյալների մշակման թիմերի (ECATSD) հաշվարկները Համաշխարհային բանկի սպառողական տվյալների ներդաշնակեցված բազայի (ECAPOV) հիման վրա, 2015թ. մայիսի 25-ի դրությամբ:

Ծանոթ. Սպառողական ագրեգատը վերցված է ՏՏԿԱՀ տվյալներից և ներդաշնակեցվել է միջազգային համադրման նպատակով: Բարեկեցության ագրեգատը ընդգրկում է պարենային և ոչ պարենային ապրանքների սպառումը ներդաշնակեցված երկարաժամկետ օգտագործման ապրանքների եւ առողջության ծախսերի հետ: Միկրո տվյալների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս <http://ecadataportal/>.

Նկար 6. Ընդհանուր բարեկեցություն, Եվրոպա և Կենտրոնական Ասիա, հիմնականում 2008–13թթ., տոկոս



Միջուկը՝ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների վիճակագրական տվյալների մշակման թիմերի (ECATSD) հաշվարկները Համաշխարհային բանկի սպառողական տվյալների ներդաշնակեցված բազայի (ECAPOV) հիման վրա, 2015թ. մայիսի 25-ի դրությամբ:

Ծանոթ. Հաշվարկներում կիրառվում է բարեկեցության բաշխվածությունը ստորին 40 տոկոսի և ընդհանուր բնակչության սպառման (եկամտի) աճի մակարդակը, 2005թ. տարադրամի գնողունակության պարիտետի հիման վրա: Բարեկեցության ագրեգատը ընդգրկում է պարենային և ոչ պարենային ապրանքների սպառումը ներդաշնակեցված երկարաժամկետ օգտագործման ապրանքների եւ առողջության ծախսերի հետ: Միկրո տվյալների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս <http://ecadataportal/>:

2.3. Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հետ համեմատությունը (Նկար 6) թույլ է տալիս ընդհանուր պատկերացում կազմել բարեկեցության գծով արձանագրված արդյունքների մասին՝ Հայաստանում ստորի 40 տոկոս բնակչության տնային տնտեսությունների սպառումը գրեթե ամենացածրն է: Նկար 6-ը համեմատում է 2008-2013թթ.-ներին ընդհանուր բարեկեցության գծով Հայաստանի արդյունքները Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի մի շարք երկրների հետ: Թեև տարբեր երկրների դիտարկման ժամկետները մասամբ չեն համընկնում, դրանք վկայում են այն մասին, որ Հայաստանում ի տարբերություն տարածաշրջանի այլ երկրների, սպառման զգալի աճ չի արձանագրվել ոչ ստորին 40 տոկոսի, ոչ՝ ընդհանուր բնակչության մոտ:

Անհավասարություն

2.4. Ճգնաժամից հետո անվիավասարության տեսանկյունից վիճակը վատթարացավ. Բնակչության պառման անհավասար բաշխվածությունը կարող է դանդաղեցնել աճի ազդեցությունը աղքատության կրճատման վրա: Ջինիի համաթիվը, որը անհավասարության չափման առավել տարածված գործիքն է, տատանվում է 0-ից (ամբողջական հավասարություն) մինչև 100-ը (ամբողջական անհավասարություն), թեև սպառողական ծախսի համար այն սովորաբար գտնվում է 30-ից 50-ի միջակայքում: Հայաստանում սպառողական ծախսի գծով Ջինիի համաթիվը 2008թ. 24.2-ի դիմաց 2012թ.-ին հասավ 26.9, իսկ 2013թ.-ին 27-ի, որը համապատասխանում է տնտեսական աճի գծով միտումներին,

վկայելով ճգնաժամից հետո անհավասարության ընդլայնման մասին: Չնայած անհավասարության նման աճին սպառման գծով Ջինիի համաթիվը զիջում է միջին միջազգային ցուցանիշին¹: Եկամուտը հակված է ավելի անհավասար բաշխվածության քան սպառումը, ընդ որում այդ երևույթը առկա է նաև Հայաստանում՝ 2013թ.-ին եկամտի գծով Ջինիի համաթիվը 2008թ. 33.9 համեմատ բարձրացել է մինչև 37.2:


Աղքատության կրճատումը միջազգային պրակտիկայում

2.5. **Թեև Հայաստանի աղքատության կրճատման գծով ցուցանիշների բարելավումը ակնհայտ է, տարածաշրջանի այլ երկրներում դրանք նույնիսկ ավելի բարձր են (Նկար 7):** Տարբեր երկրների աղքատության ցուցանիշների համադրման նպատակով Համաշխարհային բանկը հաշվարկում է ներդաշնակեցված սպառման ագրեգատներ, կիրառելով վերջին հասանելի տնային տնտեսությունների հարցման տվյալները:² Այդ հաշվարկները հիմնված են ազգային աղքատության հաշվարկի մեթոդաբանությունից տարբերվող մեթոդաբանության վրա: Աղքատությունը հաշվարկվում է համադրելով այդ ներդաշնակեցված ագրեգատները օրական մեկ շնչի հաշվով 1.25, 2.50 և 5 ԱՄՆ դոլար տարածաշրջանային աղքատության գծերի հետ համեմատության միջոցով ոորնք ճշգրտված են կիրառելով 2005թ. տարադրամի գնողունակության պարիտետը): Տարբեր ժամանակահատվածների համար համեմատությունները ցույց են տալիս, որ Հայաստանում աղքատությունը 2001-2008 թվականներին կտրուկ նվազեց՝ մեկ շնչի հաշվով օրական 2.50 ԱՄՆ դոլար աղքատության գծի պարագայում այն 2001թ. 67 տոկոսի դիմաց 2008թ.-ին կրճատվեց մինչև 26 տոկոս, թեև ճգնաժամից հետո կրկին ավելացավ: Տարբեր երկրների տվյալների համադրումները ցույց են տալիս, որ 2013թ.-ին Հայաստանի բնակչության 30 տոկոսը ապրում էին մեկ շնչի հաշվով օրական 2.50 ԱՄՆ դոլարի սահմաններում, այսինքն աղքատության մակարդակը ավելի ցածր էր քան Վրաստանում և Ղրղզստանում, սակայն ավելի բարձր էր քան Կոստովոյում և Մոլդովայում:

¹ Սպառողական ծախսի գծով Ջինիի համաթվի ցածր հաշվարկի պատճառներից մեկը կարող է լինել այն, որ ավել ապահով տնային տնտեսությունները նախընտրում են չմասնակցել հարցմանը: Համաշխարհային բանկի 2014թ. Հայաստանի պետական ծախսերի դիտարկման (2014a) ներքո կատարված հարկաբյուջետային վերլուծության շրջանակներում փորձ կատարվեց մոդելավորելու Ջինիի համաթիվը (և աղքատության մակարդակները) հաշվի առնելով ապահով տնային տնտեսությունների «բացակայություն» հարցման արդյունքներում: Արդյունքում պարզվեց, որ առավել ապահով տնային տնտեսություններն ընդգրկելու պարագայում Ջինիի համաթիվը զգալիորեն բարձրանում է:

² Ազգային և ԵԿԱ ներդաշնակեցված աղքատության մակարդակների միջև տարբերությունը պայմանավորված է կիրառվող սպառման ագրեգատների միջև տարբերությամբ և ազգային հաշվարկում չափահաս անձի համարժեքի օգտագործմամբ, մինչդեռ ԵԿԱ ներդաշնակեցված հաշվարկում վերլուծությունն իրականացվում է մեկ շնչի հաշվով:

Նկար 7. Աղքատությունը Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում




Աղբյուրը՝ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների վիճակագրական տվյալների մշակման թիմերի (ECATSD) հաշվարկները Համաշխարհային բանկի սպառողական տվյալների ներդաշնակեցված բազայի (ECAPOV) հիման վրա, 2015թ. մայիսի 25-ի դրությամբ:

Ծանոթ. Աղքատությունը գնահատվում է օրական մեկ շնչի հաշվով 2.50 ԱՄՆ դոլար միջազգային աղքատության գծի և 2005թ. տարադրամի գնողունակության պարիտետի հիման վրա: Բարեկեցության ազդեցատը ընդգրկում է պարենային և ոչ պարենային ապրանքների սպառումը ներդաշնակեցված երկարաժամկետ օգտագործման ապրանքների եւ առողջության ծախսերի հետ: Միկրո տվյալների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս <http://ecadataportal/>.

2.6. Աղքատության կրճատման գծով Հայաստանի համեմատական ցուցանիշները վատթարացել են: Տարբեր երկրներում աղքատության մակարդակի փոփոխության ընդհանուր համեմատության պարագայում ըստ մեկ շնչի հաշվով օրական 2.50 ԱՄՆ դոլարի համարժեք սպառման Հայաստանը նախկինում աշխարհում առաջատարի դեր էր զբաղեցնում, ընդ որում աղքատության կրճատման գծով երկրի ցուցանիշները գերազանցում էին նման փոփոխություններ արձանագրող երկրների 98 տոկոսի ցուցանիշները: Վերջերս սակայն աղքատության կրճատման ցուցանիշի գծով Հայաստանը հայտնվեց 73 տեղում: Թեև մինչ ճգնաժամը Հայաստանում աղքատության կրճատման գծով բարձր արդյունքներ էին արձանագրվում, 2009թ.-ից սկսած մեկ շնչի հաշվով օրական 2.50 ԱՄՆ դոլարից քիչ գումարով ապրող տնային տնտեսությունների կշիռը համեմատաբար կայուն էր (Նկար 8): 2001-2008թթ. միջև ընկած ժամանակաշրջանում մեկ շնչի հաշվով օրական 2.50 ԱՄՆ դոլար տարածաշրջանային աղքատության գծով հաշվարկված աղքատության մակարդակը 2001թ. 67.1 դիմաց 2008թ.-ին կազմեց 26.0 տոկոս, իսկ 2009թ.-ից ի վեր այն գերազանցեց 30 տոկոսը: 2015 և 2016թթ.-ների համար աղքատության կանխատեսումները ցույց են տալիս, որ տնտեսության դանդաղ վերականգնման և աճող անորոշության պայմաններում աղքատությունը հավանաբար կշարունակի պահպանվել 30 տոկոսի սահմաններում:

Նկար 8. Միջազգային աղքատության գծով միտումը մինչև 2016թ., օրական 2.5 ԱՄՆ դոլար գնող. պարիտետով, տոկոսով



Աղբյուրը՝ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների վիճակագրական տվյալների մշակման թիմերի (ECATSD) հաշվարկները Համաշխարհային բանկի սպառողական տվյալների ներդաշնակեցված բազայի (ECAPOV) հիման վրա, 2015թ. մայիսի 25-ի դրությամբ:


Ծանոթ. 2014–16թթ. աղքատության կանխատեսումները հիմնված են այն ենթադրության վրա, որ ԱԱՀ-ի աճի և աղքատության կրճատման միջև առաձգականությունը օրական 2.50 ԱՄՆ դոլար աղքատության գծի պարագայում կազմում է 0.24 տոկոս: Բարեկեցության ազդեցատը ընդգրկում է պարենային և ոչ պարենային ապրանքների սպառումը ներդաշնակեցված երկարաժամկետ օգտագործման ապրանքների եւ առողջության ծախսերի հետ: Միկրո տվյալների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս <http://ecadataportal/>.

Աղքատության կրճատումը ազգային տեսանկյունից

2.7. **2009թ. ճգնաժամից տնտեսության վերականգման արդյունքում աղքատության գծից ցածր ապրող բնակչության կշիռը նվազեց, սակայն աղքատությունը դեռևս զգալիորեն գերազանցում է նախաճգնաճամային ցածր մակարդակը (Նկար 9):** 2004-2008թթ.-ներին Հայստանում աղքատությունը կիսով չափով կրճատվեց, սակայն ճգնաժամից հետո 2013թ.-ին բնակչության 32 տոկոսը գտնվում էին ազգային աղքատության գծից ցածր, որը սահմանված է որպես մեկ չափահաս անձի հաշվով ամսական 39193 ՀՀ դրամ սպառողական ծախս: 2010թ.-ին աղքատության մակարդակը բարձրացավ մինչև 35.8 տոկոս: 2009թ. տնտեսության վերականգնումից անմիջապես հետո աղքատությունը աճել էր ինչպես բացարձակ թվերի, այնպես էլ խորության առումով, և միայն վերջին տարիներին այն փոքր ինչ կրճատվեց: 2010թ.-ին աղքատության ճեղքվածքը՝ աղքատ անձանց աղքատության գծից հեռավորությունը, նույնպես բարձր էր, կազմելով աղքատության գծի 8.1 տոկոսը: Աղքատության ճեղքվածքի քառակուսին, որն արտացոլում է աղքատության սաստկությունը 2010թ. բարձր 2.5 տոկոսի համեմատ 2013թ.-ին իջավ մինչև 1.7 տոկոս: Ծայրահեղ աղքատությունը՝ ամսական չափահաս անձի համարժեքով 22993 ՀՀ դրամ պարենային աղքատության գծից ցածր ապրող անձանց թիվը 2013թ.-ին կազմեց 2.7 տոկոս, նվազելով 2011թ. 3.7 տոկոս բարձր ցուցանիշի համեմատ: Թեև 2010թ.-ին աղքատության մակարդակը, խորությունը և սաստկությունը նվազեցին, մտահոգիչ է, որ 2012-ից մինչև 2013 թվականը

աղքատության կրճատման կամ աղքատության խորության ու սաստկության կրճատման գծով բարելավում տեղի չունեցավ:

Նկար 9. Աղքատությունը Հայաստանում, 2004–13թթ., տոկոս



Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ պաշտոնական տվյալներ:

Ծանոթ. Բոլոր հաշվարկները կատարված են ազգային աղքատության վերին գծի հիման վրա (2009թ. մեթոդաբանությամբ):

2.8. **Տնտեսական շարժունակության վերլուծությունը ցույց է տալիս, որ հետճգնաժամային շրջանում աղքատության կրճատման արագության նվազման պայմաններում 2010-2013 թթ.-ներին բնակչության որոշ մասը լքում է կամ ընդգրկվում է աղքատների շարքերում (Աղյուսակ 2):** Այդ երեկույթի դիտարկման համար սինթետիկ պանելային մեթոդաբանության կիրառումը (Dang and Lanjouw 2013) ցույց է տալիս, որ 2010-2013 թթ.-ներին տնային տնտեսությունների շուրջ 41.5 տոկոսը փոխեցին իրենց աղքատության կարգավիճակը: 2010թ. ոչ աղքատների 16.5 տոկոսը 2013թ. ընդգրկվեցին աղքատների շարքերում, իսկ 2010թ. աղքատների 25 տոկոսը 2013թ.-ին հեռացան այդ շարքերից: Այդ 4 տարիների ընթացքում բնակչության մոտ 10 տոկոսը անփոփոխ կերպով շարունակեց աղքատ մնալ: Հայաստանի համար մշակված բազմաչափ աղքատության փորձնական ինդեքսը (որի վերլուծության համարն տե՛ս ՀԲ 2014b և ՀՀ ԱՎԾ 2014թ.) ներկայացնում է աղքատության համալիր բնույթը, ինչպես նաև ներկայացնում բնակչության այն ենթախմբերը, որոնք ավելի մեծ հավանականությամբ կարող են գտնվել տնական կամ քրոնիկական աղքատության մեջ (Ներդիր 1):

Աղյուսակ 2. Աղքատության դինամիկան Հայաստանում, 2010 և 2013թթ.


	Աղքատ էին 2010թ.-ին	Աղքատ չէին 2010թ.-ին
Աղքատ էին 2013թ.-ին	9.6	16.5
Աղքատ չէին 2013թ.-ին	25.0	48.9

Աղբյուրը՝ 2010 և 2013թթ.-ների SSԿԱՀ տվյալներ.

Ծանոթ. Միայն այն տնային տնտեսությունները, որոնց գլխավորը 2010թ.-ին 25-ից 55 տարեկան էր:

Ներդիր 1. Բազմաչափ աղքատությունը Հայաստանում

Բազմաչափ աղքատության վերլուծությունը համալրում է սպառողական աղքատության վերլուծությունը և արտացոլում աղքատության համալիր, խորը և տևական բնույթը:^a Բազմաչափ աղքատության փորձնական ինդեքսը (ԲԱԻ), որը վերուծվել և ներկայացվել է ՀԲ-ի (2014b) և ՀՀ ԱՎԾ-ի (2014թ.) կողմից ներկայացնում է զրկվածությունը կրթության, առողջապահության, բնակարանային պայմանների և ծայրահեղ աղքատության առումով: ԲԱԻ-ն բաղադրյալ ինդեքս է, որը ցույց է տալիս այն անձանց թիվ, ովքեր զրկանքի են ենթարկվում ցուցանիշների ավելի քան մեկ երրորդի գծով: ԲԱԻ-ի և սպառողական աղքատության հիմքերով աղքատության համեմատությունը (տե՛ս Battiston, Diego et al. (2013)) կարող է օգտակար լինել պատկերացում կազմելու համար այն խմբերի մասին, որոնք ավելի մեծ հավանականությամբ կարող են հայտնվել տևական կամ քրոնիկական աղքատության մեջ: Նկար Բ1-ը ներկայացնում է, որ Հայաստանի բնակչության զգալի մասը բազմաչափ աղքատ է, նաև գտնվում է ազգային աղքատության գծից ցածր: 2013թ.-ին այդ խումբը կազմում էր բնակչության 7.62 տոկոսը: Աղքատության հանգամանքների և տևական բնույթի մասին ավելի լավ պատկերացումը կնպաստի նման տնային տնտեսությունների զրկանքի վերացման քաղաքականության հասցեականության բարձրացմանը:




Տնային տնտեսությունների երկրորդ խումբը բազմաչափ աղքատ է, սակայն գտնվում է ազգային աղքատության գծից բարձր (8.89 տոկոսը 2013թ.-ին): Զրկանքը նրանց ավելի խոցելի է դարձրել՝ ցնցման ենթարկվելու դեպքում աղքատության մեջ հայտնվելու վտանգի առջև: Տնային տնտեսությունների երրորդ խումբը չունի տարատեսակ զրկանքներ, սակայն այդուհանդերձ գտնվում է վերին աղքատության գծից ցածր (24.37 տոկոս): Ի տարբերություն առաջին և երկրորդ խմբերի այդ տնային տնտեսությունները անդամներն ունեն բավարար կրթության, առողջապահության և կացության հնարավորություններ, սակայն հաճախ աշխատում են ցածր արտադրողականությամբ աշխատանքում:

^a Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս ՀՀ ԱՎԾ (2013), էջեր 59 և 60: ՄԱԿ-ի ԵՏՀ աշխատանքային փաստաթղթում 15/2015 ամփոփվում են Հայաստանի բազմաչափ աղքատության ինդեքսի փորձարկման (Martirosova, et al. 2015) մեթոդաբանությունն ու նախնական եզրահանգումները:

2.9. Հայաստանի մայրաքաղաքից բացի այլ քաղաքային բնակավայրերում և չորս մարզերում աղքատության մակարդակը գերազանցում է ազգային միջինը (Նկարներ 10 և 11): Տնտեսական ակտիվությունը հիմնականում կենտրոնացավ՝ է Երևանում, որտեղ 2010թ.-ին ստեղծվել է երկրի ՀՆԱ-ի կեսից ավելին և կենտրոնացած է երկրի բնակչության շուրջ մեկ երրորդը (Eiweida and Kostanyan, 2014): Երևանից բացի այլ քաղաքային բնակավայրերում աղքատության մակարդակն ավելի բարձր է քան գյուղական բնակավայրերում կամ Երևանում (Նկար 10): 2009թ. ձգնաժամից հետո աղքատությունն աճեց բոլոր երեք վերոնշյալ խմբերում, սակայն տոկոսային առումով աղքատության աճն առավել բարձր էր Երևանից բացի այլ քաղաքային բնակավայրերում, որտեղ 2010-2013 թթ.-ներին նաև արձանագրվեց աղքատության առավել մեծ կրճատում: 2013թ.-ին այլ քաղաքների բնակչության 39 տոկոսը աղքատ էին՝ գյուղական բնակչության 31.7 և Երեանի բնակչության 25.5 տոկոսի համեմատ: Հետձգնաժամային շրջանում աղքատությունը կրճատվեց բոլոր մարզերում բացառությամբ Տավուշի մարզի (Նկար 11). 2013թ.-ին մարզերում աղքատության մակարդակը տատանվում էր 21.0 տոկոսից Վայոց Ձորում մինչև 45.9 տոկոս Շիրակի մարզում: Սյունիքի մարզում, որը հանքարդյունաբերական կենտրոն է և ապահովում է մարզի բնակչության զգալի մասի զբաղվածությունը, աղքատության մակարդակը 2013թ.-ին երկրում ամենացածրն էր՝ 25 տոկոս: Չորս մարզերում՝ Լոռու, Կոտայքի, Գերարքունիքի և Շիրակի, բնակչության շուրջ 46 տոկոսն աղքատ են, ընդ որում այդ մարզերի բնակչությունը կազմում է ընդհանուր բնակչության 36 տոկոսը: Գերիշխող տնտեսական գործունեությունը (ըստ ոլորտների կշռի մարզային արդյունքում) այդ 4 մարզերում տարբեր է՝ Գերարքունիքում և Շիրակում գյուղատնտեսությունը, իսկ Լոռիում և Կոտայքում արդյունաբերությունը (արտադրություն և հանքարդյունաբերություն): Աղքատության մակարդակի տեսանկյունից մարզերի տարբերությունները հավանաբար պայմանավորված են մի շարք հանգամանքներով, այդ թվում՝ տնտեսական գործունեության հիմնական տեսակներով, կապի հնարավորությունների և ենթակառուցվածքների առկայությամբ և տեղայնքով: Սակայն մարզերի մակարդակով վերլուծելիս դժվար է բացահայտել խորքային գործոնները, որի համար անհրաժեշտ է անցկացնել վերլուծություն ենթամարզային մակարդակով: Ներկայումս կազմվող աղքատության քարտեզը կնպաստի աղքատության մարզային գործոնների մասին պատկերացման բարելավմանը:

Նկար 10. Աղքատության մակարդակը Երևանում, այլ քաղաքային բնակավայրերում և գյուղական բնակավայրերում, 2009–13թթ., տոկոս




Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ պաշտոնական տվյալներ:

Ծանոթ. Բոլոր հաշվարկները կատարված են ազգային աղքատության վերին զծի հիման վրա (2009թ. մեթոդաբանությամբ):

2.10. Աղքատության տարածքային առանձնահատկությունների ավելի լավ ուսումնասիրությանը և Հայաստանի 11 մարզերում զարգացման ծրագրերի աշխարհագրական հասցեականության բարելավմանը նպաստելու նպատակով Համաշխարհային բանկը և ՀՀ ԱԿԾ-ն համատեղ կազմում են նոր աղքատության քարտեզը: Կառավարության կողմից իրականացված մի քանի ծրագրեր գործողությունների հասցեականության ապահովման նպատակով ներկայումս հենվում են ստորին վարչական միավորների մակարդակով (համայնքային) խոցելիության ինդեքսի վրա (այդ թվում՝ Հայաստանի Սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից ֆինանսավորվող ներդրումնային միկրոծրագրերը): Աղքատության քարտեզագրումը կարող է նաև օգտագործվել աշխարհագրական թիրախավորման նպատակով, քանզի այն նպաստում է սպառողական աղքատության գնահատմանը մարզային մակարդակից ցածր վարչական միավորների մակարդակով: Հաշվի առնելով, որ ՏՏԿԱՀ-ի ընտրանքը թույլ չի տալիս ճշգրտորեն հաշվարկել սպառողական աղքատությունը մարզային մակարդակով, ենթամարզային մակարդակով աղքատության գնահատման համար աղքատության քարտեզագրումը համատեղում է տնային տնտեսությունների մասին ՏՏԿԱՀ-ի հետազոտության և ազգային մարդահամարի տեղեկատվությունը: Հայաստանի աղքատության նախորդ քարտեզը կազմվել է 2007թ.-ին՝ 2004թ.-նի տնային տնտեսությունների հետազոտության և 2001թ. բնակչության մարդահամարի տվյալների հիման վրա (Համաշխարհային բանկ 2007թ.): Ներկայումս քարտեզը կազմվում է 2011, 2012 և 2013թթ.-ների ՏՏԿԱՀ-ների արդյունքների հիման վրա, որոնք կհամալրվեն 2011թ. մարդահամարի արդյունքներով:

Նկար 11. Աղքատության դրսևորումները ըստ Հայաստանի մարզերի, 2010 և 2013թթ., տոկոս



Աղբյուրը՝ 2010 և 2013թթ.-ների ՏՏԿԱՀ պաշտոնական տվյալները:

Ծանոթ. Ցուցանիշները ներկայացնում են յուրաքանչյուր մարզի համար աղքատության հաշվարկները: հաշվի առնելով, որ ՏՏԿԱՀ-ի ընտրանքի չափն ու կառուցվածքը մարզերում աղքատության մակարդակի գնահատումը ճշգրիտ չի կարող լինել: ՀԱՍՊ-ի Աղյուսակ 3.4-ում մարզային աղքատության մակարդակի գնահատման վստահության ինտերվալը կազմում է 95 տոկոս (ՀՀ ԱՎԾ 2014թ.):

Աղյուսակ 3. Հայաստան. աղքատության պրոֆիլը 2010 և 2013թթ.-ներին

	Աղքատության հավանականություն, 2010թ.	Աղքատության հավանականություն, 2013թ.
Կանաչ (բազա՝ տղամարդիկ)	0.060	0.083
<i>ՏՏ գիտավորի տարիքը, բազա՝ 16 – 39 տարեկան</i>		
40 - 59	0.076	0.054
50 - 64	0.046	0.027
65 -74	0.063	0.017
75 և բարձր	0.006	0.057
	(0.035)	(0.037)
<i>ՏՏ գիտավորի կրթությունը, բազա՝ տարրական</i>		
Ընդհանուր միջին	-0.037	0.004
	(0.037)	(0.046)
Միջին մասնագիտական	-0.122	-0.049
	(0.040)***	(0.048)
Բարձրագույն	-0.225	-0.136
Տնային տնտեսության մեծությունը	0.047	0.053
Երեխաներից կախվածության մակարդակ	0.070	0.056
	(0.049)	(0.054)
Զբաղվածության մակարդակը	-0.199	-0.197
	(0.028)***	(0.027)***
<i>Կազմության վայրը, բազա՝ Երևան</i>		
Երևանից բացի այլ քաղաքներ	0.156	0.108
	(0.019)***	(0.021)***
Գյուղական բնակավայրեր	-0.020	-0.052
	(0.022)	(0.023)**
Constant	0.157	0.088
	(0.049)***	(0.058)
Pseudo R ²	0.12	0.11
N	7,852	5,165

** $p < 0.05$; *** $p < 0.01$


Օսնոթ. 2010 և 2013թթ.-ների SSԿԱՀ-ի տվյալների հիման վրա Պրոբիտ մոդելի հաշվարկման սահմանային ազդեցությունները: Զբաղվածության մակարդակը սահմանված է որպես 15 տարեկանից բարձր տնային տնտեսության անդամների ներքո աշխատողների կշիռը: Երեխաներից կախվածության մակարդակը սահմանված է որպես տնային տնտեսությունում 15 տարեկանից ցածր երեխաների կշիռը: Զգալի ստանդարտ շեղումները փակագծերի մեջ են:

2.11. Աղքատության կրճատման մակարդակը դանդաղեց, ընդ որում աղքատության պատկերը էապես չփոփոխվեց: Ինչպես և նախորդ տարիներին, 2013թ.-ին աղքատներն ավելի մեծ հավանականությամբ (1) բնակվում էին մայրաքաղաքից բացի այլ քաղաքներում, (2) ավելի մեծ և ավելի շատ երեխաներով տնային տնտեսություններում, (3) ավելի վատ էին կրթված, (4) ապրում էին կին գլխավոր ունեցող տնային տնտեսություններում, (5) ավելի քիչ հավանականությամբ աշխատանք ունեին և ավելի մեծ հավանականությամբ կարող էին դուրս մնալ աշխատուժից կամ գործազուրկ լինել: Օրինակ՝ 2013թ.-ին ոչ աղքատ բնակչության 24 տոկոսի համեմատ աղքատների 29 տոկոսն ապրում էր կին գլխավոր ունեցող տնային տնտեսություններում: Տնային տնտեսության միջին չափը (տնային տնտեսությունում ապրող անդամների թիվը) աղքատ տնային տնտեսություններում հավասար էր 5.21-ի՝ ոչ աղքատների 4.23-ի համեմատ: 15 տարեկանից բարձր բնակչության կրթական մակարդակը ընդհանուր առմամբ բարձր է և բնակչության մեծ մասն ունի միջին կրթություն (հիմնական կամ հատուկ մասնագիտական), սակայն բուհական կրթության մակարդակը աղքատության կարգավիճակից կախված տատանվում է՝ կազմելով 14 տոկոս աղքատների և 26 տոկոս ոչ աղքատների մոտ: Երեխաների միջին թիվը աղքատ տնային տնտեսություններում նույնպես ավելի բարձր է: Ռեգրեսիոն վերլուծության արդյունքները (Աղյուսակ 3) հաստատում են, որ նույնիսկ տնային տնտեսությունների սոցիալ տնտեսական առանձնահատկությունները հաշվի առնելուց հետո կին գլխավոր ունեցող տնային տնտեսությունների աղքատ լինելու հավանականությունը անհամեմատ ավելի բարձր է և որքան ավելի մեծ է աշխատանք ունեցող տնային տնտեսության անդամների թիվն, այնքան ավելի բարձր է վերջինիս աղքատությունից խուսափելու հավանականությունը: Ինչպես կարելի էր ակնկալել, բուհական կրթությամբ գլխավոր ունեցող տնային տնտեսությունները շատ ավելի ցածր հավանականությամբ կարող են աղքատ լինել: 2010-2013թթ. միջև ընկած ժամանակահատվածում մեկ տարբերությունն այն է, որ հատուկ մասնագիտական կրթությամբ գլխավորով տնային տնտեսությունները (տեխնիկական և մասնագիտական կրթություն և վերապատրաստում) ավելի քիչ հավանականությամբ կարող էին աղքատ լինել 2010 թ.-ին, սակայն ոչ 2013թ.-ին:

2.12. Աղքատ և ոչ աղքատ տնային տնտեսություններում եկամտի կառուցվածքը տարբեր է (Նկար 12): 2010-2013թթ. միջև ընկած ժամանակահատվածում եկամտի աղբյուրները տնային տնտեսությունների երկու խմբերում էլ չեն փոխվել: Ոչ աղքատ տնային տնտեսությունների 10 տոկոսի միջին եկամտում խոշոր մասնավոր դրամական փոխանցումները կարևոր դեր են խաղում (Նկար 12): Աղքատ ընտանիքներում նման փոխանցումների կշիռը զգալիորեն ավելի փոքր է՝ 5 տոկոս: Նման տարբերությունը աղքատ և ոչ աղքատ տնային տնտեսությունների միջև վկայում է մասնավոր դրամական փոխանցումների կարևոր դերի մասին աղքատության կրճատման հարցում, ինչպես նաև աղքատ և ոչ աղքատ տնային տնտեսությունների արտագնա աշխատողների հմտությունների մակարդակի մասին: 2009թ.-ից աճող կենսաթոշակները զգալի մաս են կազմում և՛ աղքատ և՛ ոչ աղքատ տնային

տնտեսությունների եկամտում: Աշխատանքային եկամուտը (աշխատանքի վարձատրություն կամ ինքնագրավածություն) աղքատ և ոչ աղքատ տնային տնտեսությունների եկամտի կարևորագույն աղբյուրն է: Մյն որ աշխատանքային եկամուտն աղքատ տնային տնտեսություններում այնուամենայնիվ կազմում է ընդհանուր եկամտի շուրջ կեսը, վկայում է այն մասին, որ նման ընտանիքների անդամները հիմնականում աշխատում են այնպիսի բնագավառներում (օրինակ՝ գյուղատնտեսությունում կամ որոշ ծառայությունների ոլորտներում) որտեղ վարձատրությունը թույլ չի տալիս մարդկանց խուսափել աղքատությունից: Այնուհետև հաշվետվությունում քննարկվում է, թե ինչպես նման մակրոտնտեսական դրսևորումները կարող են համատեղ նպաստել աղքատության կրճատմանը պակաս աղքատամետ տնտեսական աճի միջավայրում:

Նկար 12. Աղքատ և ոչ աղքատ տնային տնտեսությունների եկամտի աղբյուրները, 2010 և 2013թթ., տոկոս



Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ պաշտոնական տվյալներ:


Ծանոթ. Բոլոր հաշվարկները կատարված են ազգային աղքատության վերին գծի հիման վրա (2009թ. մեթոդաբանությամբ):

3. Աղքատության կրճատման վրա ազդեցության մասին պատկերացում կազմելը

3.1. Ընդհանուր աղքատության 3.8 տոկոս կրճատումը տնտեսական աճի և բաշխվածության բաղադրիչների առանձնացման պայմաններում հաստատում է, որ թեև սպառման աճը զգալիորեն նպաստել է աղքատության կրճատմանը, սակայն սպառողական ծախսի բաշխվածությունը մեծապես չեզոքացրել է այդ գործոնը (Նկար 13): Աճից շահել են ավելի ապահով ընտանիքները: Թեև 2010-2013թթ.-ների միջև ընկած ժամանակահատվածում սպառման աճն ինքնին զգալիորեն նպաստում էր աղքատության կրճատմանը (մոդելավորված 20 տոկոսային կետով կրճատում), սպառման բաշխվածության

փոփոխությունը հոգուտ ապահով ընտանիքների որոշ չափով չեզոքացրել է տնտեսական աճի ազդեցությունը՝ սահմանափակելով այն ընդամենը 3.8 տոկոսային կետով:

Նկար 13. Սպառման աճի և բաշխողական փոփոխությունների ազդեցությունը աղքատության վրա



Աղբյուրը՝ 2010 և 2013թթ.-ների ՏՏԿԱՀ պաշտոնական տվյալները:


Ծանոթ. Մեթոդաբանությունն ըստ՝ *Datt and Ravallion 1991*թ.: Աղքատության մակարդակի ընդհանուր փոփոխությունը (տնային տնտեսությունների թվային մակարդակով) առանձնացման է ըստ բաղադրիչների. ա) տվյալ բաշխվածքի պարագայում՝ աղքատության մակարդակի փոփոխությանը շնորհիվ միջին սպառողական ծախսի ավելացման, բ) միջին ծախսման համապատասխան մակարդակի պարագայում՝ սպառման բաշխվածության փոփոխության հետևանքով աղքատության մակարդակի փոփոխության:

3.2. Ո՞ր գործոններն էին նպաստում աղքատության մակարդակի կրճատմանը 2010-2013թթ.-ներին: Տնային տնտեսությունների սպառողական ծախսերն ըստ աղբյուրների ներկայացնող վերլուծությունը ցույց է տալիս, որ 2010-2013թթ.-ներին աղքատության կրճատման հիմնական գործոններն էին աշխատանքային եկամուտը (զբաղվածությունն ու վաստակած գումարը), կենսաթոշակները, գյուղատնտեսական եկամուտը և ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումները (Նկար 14):³ Հետձգնաժամային շրջանում տեղական շուկայի պայմանները նպաստեցին աղքատության կրճատմանը: Աղքատության կրճատման հիմնական աղբյուրն էր աշխատանք ունեցող չափահաս տնային տնտեսության անդամների և նրանց վաստակած գումարի (այդ թվում՝ ինքնազբաղվածությունից եկամտի) կշռի փոփոխությունը: Երկրից արտագնա աշխատանքի մեկնած (հիմնականում Ռուսաստան) անձանց դրամական փոխանցումները նույնպես նպաստեցին աղքատության կրճատմանը: Չվաստակած եկամտի աղբյուրներից կարևոր էին կենսաթոշակները, որոնց չափը բարձրացվել էր: Չվաստակած եկամտի աղբյուրների, մասնավորապես գործազրկության նպաստների և սոցիալական աջակցության գծով տրանսֆերտների (հասցեական և ոչ հասցեական) փոփոխությունների ազդեցությունը աղքատության կրճատման վրա այդ շրջանում այնքան էլ մեծ չէր: 2010-2013թթ. ժողովրդագրական փոփոխությունները

³ Միկրո տարրալուծման եղանակի հիման վրա: Տե՛ս, օրինակ Inchauste et al. 2014:

հանգեցրեցին տնային տնտեսությունների ոչ աշխատանքային տարիքի անդամների կշռի փոքր ավելացմանը, որն աղքատության կրճատման հարցում դեր չունեցավ:

Նկար 14. Սպառողական աղքատության կրճատումը 2010-2013թթ.-ներին, տարանջատված բաղադրիչների




Աղբյուրը՝ 2010 և 2013թթ.-ների ՏԿԱՀ պաշտոնական տվյալները:

Ծանոթ. Աղքատության մակարդակի փոփոխության գործոնների առանձնացման հիման վրա: Բացասական թվերը ցույց են տալիս, որ նշված գործոնը նպաստել է աղքատության կրճատմանը, իսկ դրականները՝ որ գործոնը հակառակ ազդեցություն է թողել: Սպառում-եկամուտ հարաբերակցության ազդեցությունը ցուցադրված չէ, սակայն կարելի է համարել, որ ներկայացված բաղադրիչների տարանջատման մեջ այդ հարաբերակցությունը արտացոլում է տնային տնտեսությունների խնայողությունները և գնահատման անճշտությունը, ընդ որում եկամտի բոլոր մնացած աղբյուրներն անփոփոխ թողնելու պարագայում այդ հարաբերակցությունը թողնում է աղքատության ավելացման ազդեցություն:

3.3. Հասկանալու համար, թե ինչու հետճգնաժամային աճից առավել շատ շահել են ապահով ընտանիքները, բաշխվածության ներքո համեմատվել են սպառողական ծախսի աճի գործոնները և պարզվել է, որ ապահով ընտանիքների սպառման աճի վրա հատկապես մեծ ազդեցություն է թողել կենսաթոշակների և ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումների աճը (Նկար 15): Նկար 4.Բ-ն ցույց է տալիս, որ անապահով ընտանիքների համեմատ (բաշխվածության սանդղակի ստորին 40 տոկոս) ավելի ապահով ընտանիքների մոտ (վերին 60 տոկոս) սպառողական ծախսի աճն ավելի մեծ է եղել: Նկար 15-ը ցույց է տալիս, որ սպառման աճի գործոնները բաշխվածության ներքո տարբեր են: Սպառման աճի պարագայում տնային տնտեսության անդամների կշռի փոփոխությունը ստորին 40 տոկոսի համեմատ վերին 60 տոկոսի համար ավելի մեծ դեր էր խաղում: Նույնը կարելի է ասել աշխատանքային և գյուղատնտեսությունից եկամտի մասին: Ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումները (հիմնականում Ռուսաստանից) և կենսաթոշակային եկամտի աճը (կառավարության կողմից հիմնական կենսաթոշակի չափի բարձրացման մասին որոշման կայացման արդյունքում) ավելի շատ նպաստեցին վերին 60 տոկոսի սպառման

աճին: Ստորին 40 տոկոս տնային տնտեսությունների սպառման աճը պայմանավորված էր տնային տնտեսության անդամների վաստակած գումարների և կշիռների փոփոխությամբ: Ուշագրավ է, որ ճգնաժամից հետո նվազեց անապահով խմբի՝ աղքատներին միտված սոցիալական աջակցության՝ ԸՆԾ-ից եկամուտը, ինչը հավանաբար պայմանավորված է 2010-2013թթ.-ներին այդ ծրագրի ծավալների կրճատմամբ: Այսպիսով, սպառման աճի տարբերությունը և աճի աղքատամետ ազդեցության չեզոքացումը (հարաբերական իմաստով) հավանաբար պայմանավորված է կենսաթոշակային եկամտի և ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումների աճով, ինչպես նաև աղքատության մեղմացմանը միտված սոցիալական աջակցության կրճատմամբ:

Նկար 15. Սպառման աճի գործոնները, ստորին 40 և վերին 60 տոկոսներ, 2010-2013թթ.-ներին



Աղբյուրը՝ 2010 և 2013թթ.-ների ՏՏԿԱՀ պաշտոնական տվյալները:

Ծանոթ. Աղքատության մակարդակի փոփոխության գործոնների առանձնացման հիման վրա: Բացասական թվերը ցույց են տալիս, որ նշված գործոնը նպաստել է աղքատության կրճատմանը, իսկ դրականները՝ որ գործոնը հակառակ ազդեցություն է թողել: Սպառում-եկամուտ հարաբերակցության ազդեցությունը ցուցադրված չէ:

3.4. **Հայաստանում աղքատության կրճատման պատկերացման համար հաջորդ քայլը մակրո համատեքստի և միկրո վելուծության միասնականացումն է:** 2009թ. ճգնաժամից հետո աղքատության կրճատման գործընթացի և տնտեսական աճի՝ աղքատամետ կամ ոչ աղքատամետ լինելու աստիճանի հիմնական գործոնները հանդիսացել է են ներքին աշխատաշուկայի փոփոխությունները, արտագնա աշխատողների դրամական փոխանցումները և սոցիալական տրանսֆերտները (հիմնականում կենսաթոշակների) ազդեցությունը:

Ներքին աշխատաշուկա

3.5. **2010-2013թթ.-ների միջև ընկած ժամանակահատվածում աշխատաշուկայում տեղի են ունեցել որոշ դրական փոփոխություններ (Աղյուսակ 4):** Աշխատուժի մասնակցության մակարդակը 61.0 տոկոսից հասել է 63.4 տոկոսի, հիմնականում կանանց (52-ի փոխարեն 56 տոկոս) և քաղաքային բնակչության (56-ի փոխարեն 58 տոկոս) մասնակցության աճի շնորհիվ: Բոլոր աշխատողների զբաղվածության մակարդակը նույնպես աճեց, իսկ գործազրկությունը 19-ից կրճատվեց մինչև 16.2 տոկոս: 2013 թ.-ին քաղաքներում գործազրկությունը դեռևս բարձր էր և կազմում էր 23.4 տոկոս, ընդ որում կանանց գործազրկության ցուցանիշը՝ 18 տոկոս, գերազանցում էր տաղամարդկանց գործազրկության ցուցանիշը՝ 14.4 տոկոս: Հստակ չէ, թե ինչ գործոններով էր պայմանավորված կանանց՝ աշխատուժին մասնակցելու և զբաղվածության տոկոսի աճը: Հնարավոր է, որ աշխատաշուկայում կանանց մասնակցության աճը պայմանավորված էր ծառայությունների ոլորտի աճով:

3.6. **Չնայած ցածր ընդհանուր զբաղվածության և գործազրկության բարձր մակարդակի ախատավարձերը Հայաստանում աճեցին:** Զբաղվածության մակարդակից ելնելով կարելի է ենթադրել, որ աշխատանքային ռեսուրսները տնտեսությունում թերօգտագործվում են, սակայն, նույնիսկ անաշխուժ աշխատաշուկայի պայմաններում, տնտեսության որոշ ոլորտներում արձանագրվել է իրական աշխատավարձերի (տես ստորև) աճ, որին նպաստել է նվազագույն աշխատավարձի բարձրացումը: Աշխատավարձերի բարձրացման արդյունքում ավելացել է տնային տնտեսությունների անդամների կողմից վաստակած գումաների դերը աղքատության կրճատման հարցում (Նկար 14): Նվազագույն աշխատավարձը բարձրացել է ամսական 30,000 ՀՀ դրամից (62 ԱՄՆ դոլար, 22,912 ՀՀ դրամ՝ 2005թ. դրամի իրական արժեքով) մինչև 45,000 ՀՀ դրամ (93 ԱՄՆ դոլար, 29,424 ՀՀ դրամ՝ 2005թ. դրամի իրական արժեքով): Արդյունքում միջին անվանական համախառն աշխատավարձը 102,652 ՀՀ դրամից (212 ԱՄՆ դոլար, 78,401 ՀՀ դրամ՝ 2005թ. դրամի իրական արժեքով) հասել է 146,524 ՀՀ դրամի (303.78 ԱՄՆ դոլար, 95,809 ՀՀ դրամ՝ 2005թ. դրամի իրական արժեքով): Դրա շնորհիվ 2010-2013թթ.-ների ընթացքում արձանագրվել է նվազագույն աշխատավարձի 8 տոկոս տարեկան իրական աճ և միջին համախառն աշխատավարձի 6 տոկոս աճ:

Աղյուսակ 4. Աշխատաշուկայի ցուցանիշները, 2010-2013թթ., տոկոս


	Աշխատուժի մասնակց.		Զբաղված. մակարդակ		Գործազրկ. մակարդակ	
	2010թ.	2013թ.	2010թ.	2013թ.	2010թ.	2013թ.
Total	61.2	63.4	49.6	53.2	19.0	16.2
Male	72.3	72.8	59.9	62.3	17.0	14.4
Female	52.2	55.9	41.1	45.8	21.2	18.1
Urban	55.9	58.3	40.4	44.6	27.8	23.4
Rural	71.1	72.5	66.8	68.1	6.1	6.0

Աղբյուրը՝ 2014թ. ՀԱՄՊ. 2010 և 2013թթ.-ների համար: Ծանոթ. Բնակչության տարիքը՝ 15-75 տարեկան:

3.7. **Զբաղվածության ոլորտային կառուցվածքը լավ է համապատասխանում ՀՆԱ-ի աճի գլխավոր գործոն հանդիսացող ծառայությունների ոլորտի աճին, ընդ որում ոչ աղքատ տնային տնտեսությունների անդամների մասնակցությունն այդ ոլորտում ավելի բարձր է, որի շնորհիվ նրանք ավելի շատ են շահում ոլորտային աճի նոր կառուցվածքից (Նկար 16):** 2013թ. զբաղվածության կառուցվածքում ծառայությունները (46.8 տոկոս) ունեին ամենաբարձր կշիռը, որին հետևում էին գյուղատնտեսությունը (36.1 տոկոս) և այնուհետև արդյունաբերությունը (17 տոկոս): Ծառայությունները նաև ապահովում են ոչ աղքատ բնակչության զբաղվածության ամենամեծ մասը, որի շնորհիվ վերջիններս շահում են ՀՆԱ-ի աճի հիմնական աղբյուրից: Ծառայությունների ոլորտում զբաղվածության աճին զուգահեռ նվազեց գյուղատնտեսական զբաղվածության մեջ աղքատների կշիռը: Ոչ աղքատների համեմատ աղքատների կշիռը արդյունաբերական զբաղվածության մեջ ավելի բարձր է: Վերջերս արդյունաբերության ոլորտում արտահանմանն ուղղված կառավարության նոր ռազմավարությունը կարող է դրական անդրադարձալ վերջինիս կշռի վրա զբաղվածության ներքո: Գյուղատնտեսությունը, որի կշիռը ՀՆԱ-ում չնայած պետական ներդրումների կազմում է ընդամենը 20 տոկոս, այլևս աղքատների զբաղվածության հիմնական աղբյուրը չի

հանդիսանում, սակայն դեռևս ապահովում է աղքատ բնակչության 40 տոկոսի և ոչ աղքատ բնակչության 36 տոկոսի զբաղվածությունը:


Նկար 16. Զբաղվածության ոլորտային կառուցվածքը, տոկոս



Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ-ի և ՀՄՊԱ-ի տվյալները 2010 և 2013թթ.-ների համար . Ծանոթ. Աշխատանքային տարիքի բնակչության տարիքը՝ 15–75 տարեկան:

3.8. **Ոչ գյուղատնտեսական զբաղվածության կառուցվածքը աղքատ և ոչ աղքատ բնակչության համար տարբեր է (Նկար 17ա և 17Բ):** 2013թ.-ին արտադրության, մեծածախ և մանրածախ առևտրի և կրթության/առողջապահության/սոցիալական ծառայությունների բնագավառներից յուրաքանչյուրի կշիռը զբաղվածության կառուցվածքում կազմում էր մոտ 10 տոկոս: Ինչպես կարելի էր ակնկալել աղքատների մասնակցությունը բարձր հմտություններ պահանջող ոլորտներում, ինչպիսիք են օրինակ՝ ֆինանսական միջամտությունն ու պետական կառավարումը շատ փոքր է (6 տոկոս 2013թ.-ին): Չնայած վերջին տարիներին արտադրության ծավալների կրճատմանը, շինարարությունում շարունակում է աշխատել աղքատ բնակչության սովոր զանգված (7 տոկոս): Ոչ աղքատների զբաղվածության կառուցվածքում պետական կառավարմանը, կրթության/առողջապահության/սոցիալական ծառայությունների, արտադրության, մեծածախ և մանրածախ առևտրի բնագավառներից յուրաքանչյուրի կշիռը զբաղվածության կառուցվածքում կազմում է մոտ 10 տոկոս: 2010-2013թթ. միջև ընկած ժամանակահատվածում տեղի են ունեցել նաև ուշագրավ փոփոխություններ, մասնավորապես այդ շրջանում ավելացել է աղքատների զբաղվածության կշիռը արտադրության, մեծածախ և մանրածախ առևտրի, ինչպես նաև կրթության/առողջապահության/սոցիալական ծառայությունների բնագավառներում: Շինարարական արտադրության ծավալների կտրուկ անկմանը համահունչ այդ ոլորտի կշիռը ինչպես աղքատ, այնպես էլ ոչ աղքատ բնակչության համար նվազել է:

Նկար 17. Զբաղվածության մանրամասն ոլորտային կառուցվածքը, տոկոս




Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ-ի և ՀՄՊԱ-ի տվյալները 2010 և 2013թթ.-ների համար: Ծանոթ. Աշխատանքային տարիքի բնակչության տարիքը՝ 15-75 տարեկան:

3.9. **2010-2013թթ.-ների ընթացքում իրական ժամային աշխատավարձն աճել է ոլորտների մեծ մասում (Նկար 18).**⁴ 2010-2013թթ.-ների ընթացքում գյուղատնտեսության ոլորտում աշխատող անձանց թիվը տարեկան կրճատվեց 2.7 տոկոսով և ժամային աշխատավարձերի բարձրացումը հավանաբար պայմանավորված էր աշխատողների թվի կրճատմամբ (2013թ. նաև լավ տարի էր գյուղատնտեսական արտադրանքի համար). Միևնույն ժամանակ կրճատվեց նաև զբաղվածությունը շինարարության ոլորտում, տարեկան 8 տոկոսով, մինչդեռ աշխատավարձերն աճեցին տարեկան 1 տոկոսով: 2007թ.-ին, երբ շինարարությամբ պայմանավորված աճի գագաթնակետն էր, ոլորտում զբաղվածների թիվը կազմում էր 91,000 մարդ, սակայն 2013թ.-ին այն կրճատվեց մինչև 66,000-ի: Արդյունաբերության (հիմնականում արտադրության), առևտրի և զբոսաշրջության ոլորտներում իրական աշխատավարձերը արտացոլեցին զբաղվածության աճը: Արտադրության ոլորտում նման աճը կարող է պայմանավորված լինել 2012թ.-ին կառավարության՝ արտահանմանն ուղղված որոշ ոլորտներ գերակա համարելու մասին որոշմամբ: Զբաղվածության և իրական աշխատավարձերի որոշ աճ արձանագրվեց տրանսպորտի և կապի, ինչպես նաև ֆինանսական ծառայությունների ոլորտներում: Սույն վերլուծությունում պետական կառավարումն ու կրթության/առողջապահության/սոցիալական ծառայությունները

⁴ Այս վերլուծությունում ՀՀ ԱՎԾ-ի համեմատ օգտագործվում է տնտեսության ոլորտների փոքր ինչ այլ դասակարգում (որոշ ենթաօլորտներ համախմբված են):

դիտարկվում են համախմբված և դա միակ խումբն է, որտեղ արձանագրվել է իրական աշխատավարձերի նվազում: Մնացած ոլորտներում, մասնավորապես արվեստի և ժամանցի, մասնավոր բնակարանային սեփականատերերի և մի շարք այլ ոլորտներում արձանագրվեց զբաղվածության կտրուկ աճ, սակայն նաև իրական աշխատավարձերի նվազում:

Նկար 18. Իրական աշխատավարձերի և զբաղվածության աճն ըստ ոլորտների, 2010-2013թթ., տոկոս



Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ-ի 2010 և 2013թթ.-ների պաշտոնական տվյալները: ԱՎԾ-ի ոլորտային դասակարգում, աշխատավարձերը ճշգրտված են դեֆլյացիայով ըստ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների վիճակագրական տվյալների մշակման թիմի (ECATSD) կողմից կիրառվող սպառողական գների ինդեքսի: *Ծանոթ.* Միջին ժամային աշխատավարձերը հաշվարկվել են վաստակած գումարների և աշխատած ժամերի մասին տվյալների հիման վրա: Գյուղատնտեսության ոլորտում իրական աշխատավարձերի մասին տվյալները կարող են ոչ ժգրիտ լինել աշխատած ժամերի մասին տեղեկությունների բացակայության պատճառով: Արդյունաբերությունը չի ներառում շինարարության ոլորտը:


3.10. Զնայած տեղական աշխատաշուկայի ոլորտում արձանագրված դրական միտումների ի հայտ են գալիս որոշ մտահոգություններ: Ոչ գյուղատնտեսական ոլորտներում արձատրվող բաղվածության կշռի ամբողջ աճը պայմանավորված է ընդհանուր զբաղվածության մեջ ինքնազբաղվածների կշռի ավելացմամբ, որը 5.5-ից հասավ 7 տոկոսի (65,000 2010թ.-ին, 77,900 2013թ.-ին): Քաղաքներում աշխատանք փնտրող անձանց պարագայում, որոնց գործազրկության մակարդակը 23 տոկոս է (գրեթե յուրաքանչյուր չորրորդ անձը), 2013թ.-ին աշխատանք փնտրելու միջին տևողությունը կազմել է 21 ամիս (ՀՀ ԱՎԾ 2014թ.), միջինում 23.7 ամիս կանանց և 16 ամիս տղամարդկանց համար: Աշխատանք փնտրելու երկար տևողությունը և ինքնազբաղված աշխատողների թվի աճը վկայում են հմտությունների անհամապատասխանության և գուտ աշխատատեղերի ստեղծման գծով ցածր ցուցանիշների մասին: Դրանցից երկրորդն անշուշտ կարևոր գործոն է: ՀՀ ԱՎԾ-ի 2013թ. վիճակագրական տարեգրքում հաղորդվում է, որ 2013թ.-ին գործատուները պլանավորել էին մինչև տարվա վերջ աշխատանքի ընդունել 1514 աշխատողների, ընդ որում յուրաքանչյուր հայտարարված թափուր աշխատատեղի համար դիմել էին 38 թեկնածուներ: Գործազուրկների մոտ 63 տոկոսն ունեն աշխատանքային փորձ, դրանց մեծ մասը ստիպված են եղել հեռանալ աշխատանքից աշխատատեղերի կրճատման, ընկերության լուծարման կամ սնանկացման կամ ժամանակավոր աշխատանքի ավարտի պատճառով: Հանավանաբար բարձր է նաև հմտությունների անհամապատասխանությունը, հաշվի առնելով այն, որ աշխատանք

փնտրող անձանց 22 տոկոսն ունեն բարձրագույն կրթություն, իսկ 26 տոկոսը միջին մասնագիտական կրթություն:

Արատզնա աշխատողներից ստացվող դրամական փոխանցումները

3.11. Հայաստանում աղքատության կրճատման և տնտեսական աճի միտումների ձևավորման հարցում դեր են խաղում նաև միջազգային շուկաներում տեղի ունեցող զարգացումները, որոնք արտացոլվում են ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումների հոսքով: 2010-2013թթ.-ներին Հայաստանի տնային տնտեսությունների շուրջ 8 տոկոսն ունեին աշխատանքային տարիքի անդամներ, որոնք մեկնել էին երկրի այլ շրջաններ կամ երկրից դուրս (ՀՀ ԱՎԾ 2014թ.): Տղամարդ միգրանտների 60 տոկոսը և կին միգրանտների 25 տոկոսը լքել էին իրենց տնային տնտեսությունը աշխատանք գտնելու ակնկալիքով: Դրանց մոտ 90 տոկոսը մեկնել էին Ռուսաստան և շատերը աշխատանքի էին անցել շինարարության ոլորտում: Միգրանտների, ինչպես և բոլոր հայաստանցիների մեծ մասը, ունեն միջնակարգ կրթություն, ընդ որում, արդյունաբերության կամ մանրածախ առևտրի ոլորտում զբաղվածների միգրանտների շուրջ 30 տոկոսն ունեն նաև բարձրագույն կրթություն (Նկար 19): Դրամական փոխանցումները ուղղվում են Հայաստանի 10 տոկոս աղքատ տնային տնտեսություններին և 16 տոկոս ոչ աղքատ տնային տնտեսություններին (տես Նկար 12): Դրամական փոխանցումների ծածկույթի նման տարբերությունը պայմանավորված է ուղարկող միգրանտների հիմնությունների մակարդակով, ինչպես նաև դրամական փոխանցումների՝ աղքատության կրճատման ազդեցությամբ: Թեև դրամական փոխանցումների ներկա բարձր մակարդակը դրական է անդրադառնում ընդհանուր պահանջարկի և ընտանիքների բարեկեցության վրա, այն նաև երկակի ազդեցություն է թողնում աշխատաշուկայի վրա, որը ցանկալի չէ բարձր զբաղվածության հիման վրա համընդհանուր տնտեսական աճի տեսանկյունից՝ (1) դրամական փոխանցումները չեն խթանում ախատանքային տարիքի անձանց կողմից աշխատանք փնտրելը, և (2) դրամի փոխարժեքի արժևորում, քանզի դրամական փոխանցումները նվազեցնում են արտահանման եկամտաբերությունը և նոր աշխատատեղերը հիմնականում բացվում են ոչ արտահանելի ոլորտներում: Karapetyan and Harutyunyan (2013) աշխատանքում բացահայտվել են նման դրսևորումներն ապացուցող հանգամանքներ, որոնք պետք է լրացուցիչ ուսումնասիրվեն հետագայում աղքատության կրճատման վրա դրանց ազդեցության տեսանկյունից:

Նկար 19. Միգրանտների կրթությունը ըստ զբաղվածության ոլորտների, 2013թ., տոկոս




Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ 2013թ.-ի տվյալներ:

Կենսաթոշակները և սոցիալական տրանսֆերտները

3.12. Հայաստանում կենսաթոշակներն ու այլ սոցիալական աջակցությունը կարևոր սոցիալական պաշտպանության ծրագրեր են, որոնք նաև տնային տնտեսությունների համար եկամտի կարևոր աղբյուր են հանդիսանում: Թեև ԸՆԾ-ի հասցեականությունը բարձր է, այն փոքր սոցիալական աջակցության ծրագիր է: ԸՆԾ-ի տրանսֆերտները կազմում են աղքատ տնային տնտեսությունների եկամտի մոտ 10 տոկոսը, ընդ որում աղքատներին է հասնում նպաստների 60 տոկոսը: Այդուհանդերձ ԸՆԾ տրանսֆերտները թույլ չտվեցին կրճատել աղքատությունը 2010-2013թթ.-ների ընթացքում: Կենսաթոշակները ունիվերսալ են և անձինք դրանք ստանալու իրավունք են ձեռք բերում եկամտի կորստի դեպքում: Առավել տարածված կենսաթոշակի տեսակներն են ծերության և հաշմանդամության թոշակները: Ներկայումս ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց թոշակային տարիքը 63 տարեկան է, իսկ թոշակային տարիքի աշխատող անձանց կշիռը կազմում է բնակչության մոտ 12 (բնակչության 67 տոկոսը աշխատանքային տարիքի է): Կենսաթոշակները կազմում են աղքատ տնային տնտեսությունների եկամտի 27 տոկոսը և ոչ աղքատ տնային տնտեսությունների եկամտի 20 տոկոսը: Կենսաթոշակների ծածկույթը բարձր է նաև սպառման բաշխվածության ողջ շրջանակի ներքո (Նկար 20): Ստորին քվինտիլի գրեթե 90 տոկոսն ապրում է կենսաթոշակներ ստացող տնային տնտեսություններում, թեև ամենահարուստ քվինտիլի պարագայում ծածկույթը նվազում է մինչև 33 տոկոս: Ծերության կենսաթոշակները կարող են հատկացվել սոցիալական կամ բաշխողական համակարգով (աշխատանքային ստաժի հետ կապված), բաշխողական կենսաթոշակներ ստացող ապահով ընտանիքների կշիռն ավելի բարձր է: Թոշակային եկամուտը ոչ միայն աղքատության կրճատման, այլ նաև վերին 60 տոկոս բնակչության եկամտի ավելացման կարևոր աղբյուր է: Ինչպես երևում է Աղյուսակ 1-ից հետզհետե միջին տարիներին կառավարությունը զգալիորեն բարձրացրել է կենսաթոշակների չափերը և դրանց՝ աղքատության կրճատման ազդեցությունը ակնհայտ է: Սակայն կարևոր է նշել, որ թոշակային եկամտի աճը շահեկան է եղել նաև ավելի ապահով ընտանիքների համար, որոնք բաշխողական թոշակներ են ստանում:

Նկար 20. Կենսաթոշակների ծածկույթը ըստ սպառման քվինտիլի, 2013թ., տոկոս



Աղբյուրը՝՝ՏՏԿԱՀ 2013թ.-ի տվյալներ:

Ծանոթ. Քվինտիլները հիմնված են մինչթոշակային սպառման վրա:

4. Եզրակացություն

4.1. Ճգնաժամից հետո սահմանափակ աղքատության կրճատումը և ընդհանուր բարեկեցությունը հարց են առաջացնում, թե ինչու տնտեսական աճը պակաս աղքատամետ

դարձավ: Այս աշխատանքում փորձ է կատարվում հասկանալ, թե որոնք էին աղքատության կրճատման և ընդհանուր բարեկեցության (ստորին 40 տոկոսի սպառման աճի) գործընթացի արագությունը կանխորոշող գործոնները 2010–13թթ.-ներին: Անշուշտ ցածր տնտեսական աճը սահմանափակում է աղքատության կրճատման ծավալները, որին չի նպաստում նաև կանխատեսվող մակրոտնտեսական պայմանների որևէ վատթարացումը: Ներկա պայմաններում կառավարության կողմից կենսաթոշակների և նվազագույն աշխատավարձերի բարձրացման մասին որոշումը նպաստում է աղքատության կրճատմանը: Աղքատության կրճատմանը նպաստեցին նաև ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումները, հիմնականում Ռուսաստանից: Սակայն կենսաթոշակներից և դրամական փոխանցումներից ամենայն հավանականությամբ ավելի շատ շահում են ապահովված ընտանիքները, այլ ոչ թե ստորին 40 տոկոսը, որի հետևանքով աճը պակաս աղքատամետ բնույթ է ձեռք բերում: Դրամական փոխանցումների և կենսաթոշակների ազդեցությունը անապահով ընտանիքների վրա հասկանալու համար անհրաժեշտ է լրացուցիչ վերլուծություն: Մասնավորապես առկա է մտահոգություն, անն Հայաստանին վերաբերող որոշ ապացույցներ, որ դրամական փոխանցումները կարող են բացասաբար անդրադառնալ աշխատելու ցանկության վրա, որը նույնպես լրացուցիչ ուսումնասիրություն է պահանջում:

4.2. **Առկա են նաև որոշ դրական կառուցվածքային փոփոխություններ տնտեսությունում, որոնք կարևորվում են հետագա կայուն աղքատության կրճատման տեսանկյունից:** ՀՆԱ-ի կառուցվածքում շինարարությանը շարժիչ ուժի դերը զիջեց ծառայությունների ոլորտին, ընդ որում արտահանման զարգացմանը միտված կառավարության զարգացման ռազմավարության շնորհիվ որոշակի աշխուժացում նկատվեց նաև արտադրության ոլորտում: Թեև գյուղատնտեսության ոլորտի կշիռը ՀՆԱ-ում մեծ չէ, վերջին տարիներին այստեղ նույնպես դրական միտումներ են արձանագրվել: Զբաղվածության ասպարեզում ծառայությունների ոլորտը ստնաձնել է առաջատարի դերը: Նման տեղաշարժերը որոշակի խնդիրներ են առաջացրել անապահով անձանց համար, որոնց կրթությունն ավելի ցածր է և նրանք չեն կարողանում ամբողջությամբ օգտվել ծառայությունների հենքով տնտեսական զարգացման աղքատության կրճատման ներուժից: Ավելին, աղքատության կրճատման գործոնների առանձնացումը ըստ բաղադրիչների հստակ ցույց է տալիս զբաղվածության կարևորությունը, թեր Հայաստանի աշխատաշուկայում արձանագրվել է զբաղվածության մակարդակի սահմանափակ աճ: Այդ ամենը վկայում է, որ աղքատության կրճատման և ընդհանուր բարեկեցության հարցում զգալի հաջողության հասնելու համար քաղաքականությունը պետք է շարունակի ուսումնասիրել կարիքավորների հմտությունների բարելավման հնարավորությունները և խրախուսել բարձր արտադրողականություն ունեցող ոլորտներում, ինչպիսին է արտադրությունը, նոր աշխատատեղերի ստեղծումը:

4.3. **Հայաստանը նաև կանգնած է աշխատաշուկայի տևական կառուցվածքային խնդիրները բարդացնող մի շարք կարճաժամկետ մարտահրավերների առջև:** Էներգետիկ սակագների աճը, Եվրասիական Մաքսային Միության ազդեցությունը և Ռուսաստանի տնտեսության աճի տեմպերի անկման հետևանքները կարող են նվազեցնել աղքատության կրճատման և ընդհանուր բարեկեցության հնարավորությունները: Իրոք՝ 2013 թ.-ին տնտեսական աճի տեմպերի դանդաղեցմանը զուգահեռ աղքատության կրճատումը գրեթե կանգ առավ՝ 2012 և 2013թթ.-ների միջև ընկած ժամանակահատվածում աղքատության մակարդակի փոփոխություն տեղի չի ունեցել: Առաջիկայում ակնկալվող ցածր տնտեսական

աճը, դրամի արժեզրկմամբ պայմանավորված գնաճի, էներգետիկ գների բարձրացման և մասնավոր դրամական փոխանցումների կանխատեսվող 30 տոկոս կրճատման հետ մեկտեղ, բացասաբար կանդրադառնա աղքատ և սոցիալապես անապահով բնակչության եկամուտների և սպառման աճի վրա: Նման պայմաններում մեծ է աղքատության աճի հավանականությունը 2015 և 2016թթ.-ներին:

Օգտագործված գրականություն

- Anusic (2015): “Pensions in Armenia”, unpublished mimeo, World Bank, Washington DC.
- Asian Development Bank, ADB (2014): “Asian Development Outlook”, Asian Development Bank, Manila.
- Battiston, Diego et al. (2013): "Income and Beyond: Multidimensional Poverty in Six Latin American Countries," Social Indicators Research, vol. 112(2), pages 291-314.
- Dang, Hai-Anh and Peter Lanjouw (2013): “Measuring Poverty Dynamics with Synthetic Panels Based on Cross-Sections,” Policy Research Working Paper No. 6504, World Bank, Washington DC.
- Eiweida, Ahmed and Tigran Kostanyan(2014): “Armenia: Trends and Challenges in Regional Development”, unpublished mimeo, World Bank, Washington DC.
- Ghazaryan, Armine and Guillermo Tolosa (2012): “Remittances in Armenia: Dynamic Patters and Drivers”, unpublished mimeo, International Monetary Fund, Washington DC.
- Inchauste, Gabriela et al. (2014): “Understanding Changes in Poverty”, World Bank, Washington DC.
- Karapetyan, Lili and Liana Harutyunyan (2013): “The Development Side Effects of Remittances in CIS countries: The Case of Armenia”, Consortium for Applied Research on International Migration, European University Institute, Florence.
- Lustig et al. (2013): “Commitment to Equity: The Impact of Taxes and Social Spending in Inequality and Poverty in Argentina, Bolivia, Brazil, Mexico, Peru, and Uruguay: An Overview. CEQ working paper No. 13.
- Martirosova, Diana et al. (2015): “Monitoring Poverty in Armenia Using Multidimensional Poverty Indicators”, UNECE working paper No. 15/2015, Geneva.
- National Statistical Service of the Republic of Armenia, NSSRA (2013), “Social Snapshot and Poverty in Armenia 2013,” Yerevan.
- National Statistical Service of the Republic of Armenia, NSSRA (2014), “Social Snapshot and Poverty in Armenia 2014,” Yerevan.
- World Bank (2014a): “Armenia Public Expenditure Review”, World Bank, Washington DC.
- World Bank (2014b): “Poverty Assessment for Armenia, Promoting Shared Prosperity in Armenia”, World Bank, Washington DC.
- World Bank (2015): “Macro Poverty Outlook”, World Bank, Washington DC.
- World Bank (2007): “Armenia: Geographic distribution of poverty and inequality”, Report No. 41181-AM, World Bank, Washington DC.
- World Bank: “World Development Indicators (data accessed on May 25th 2015)”, World Bank, Washington DC.